

բազմին հերոսը և դեկավարը եղած էր վահան Մամիկոնեան զօրավարը, հայոց քաջասիրություն անվեհեր և մեծ պարագետը: Դաղար Փարպեցին և Եղիշէն, սոյն երկու պատմիչներն ալ, նոյն նիւթին շռւջ այն է Վարդանանց Պատերազմին Պատմութիւնը գրած են: Դաղար Փարպեցին, Աղան Արծրունին աշակերտած էր և գովեստով կը խօսի իր ուսուցչին մասին: Ան, իր պատմութիւնը գրած է Վահան Մամիկոնեան սպարապետին և հայոց մարզպանին խնդրանքովը: «Արարեալ ի խնդրոյ զօրավարին հայոց և մարզպանին տեառն Վահանայ Մամիկոնոյ»: Դաղար Փարպեցին, իր պատմութիւնը, Հայաստանի բաժանումէն (390) կը սկսի և կը հասցնէ մինչև Վահան Մամիկոնեան զօրավարին մարզպանութեան տարին (485): Փարպեցիին պատմութիւնը կը վերջանայ Յովհան Մանդակունի հայրապետին նշանակալից տաենաւ խօսութեամբը: Ըլլայ Եղիշէն, ըլլայ Փարպեցին, երկու պատմիչներն ալ Մամիկոնեաններէն հրաւէր կը ստանան գրելու և պատմելու Վարդանանց ազգային և կրօս-

(Նարենակելլի՝ 1)

նական մեծ պատերազմը: Եղիշէն, իր պատմութիւնը կը գրէ Դաւիթ Մամիկոնեան երեցին խնդրանքովը: «Դաւիթի երիցու Մամիկոնի հայցեալ», իսկ Փարպեցին ալ Վահան Մամիկոնեան զօրավարին և հայոց մարզպանին խնդրանքովը կը գրէ Արարեալ ի խնդրոյ զօրավարին հայոց և մարզպանին տեառն Վահանայ Մամիկոնոյ»: Մամիկոնեաններն են որ կ'ուզեն որ իրենց ցոյց տուած զիւցազնական քաջագործութիւնները գրուին, որպէսզի՝ ապագայ սերունդներ ճանչնան: Մամիկոնեան նախարարական տունը, մեր ցեղին ուազմաշունչ և ազատական շարժման դլխաւոր գերակատարները և ղեկավարները եղած են, հայոց զինուօրական ուժին կրօնասէր և կրօնվի ու զիւցազն առաջնորդներն եղան, որոնք հինգ դարեր շարունակ վարեցին և կազմակերպեցին մեր ազատագրական և անկախութեան շարժումը, ազգի և կրօնքի անընկնձելի և անխորտակելի երկու մեծ ազոյն ուժերով զօտեսպնդուած և զօրացած:

ՊԱՐԳԵԼԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԿԱՍԵԱՆ

### Գ Ե Ց Ե Բ Ո Ր Դ Դ Ե Վ Ա Ն Ա Կ

## ՀԱՅՈՑ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱԽՈՐԻՆ ԴԵՄ

(Աղաս բարգմանութեամբ կուտանի Եղիշէի «Վասն Վարդանանց եւ Հայոց Պատերազմին» հատորէն Սւարայրի ձակատամարտի դրուազը):

Երբ Պարսից գունդին հրամանատարը տեսաւ թէ, զանոնք խարելու համար պատգամաւորները սպասեցան, և իրենց անքակտելի միաբանութենէն ցրուելու յօյսը հատաւ, այն տաեն կը կանչէր անօրէն Վասակը և բոլոր ուրացեալ իշխանները որ անոր հետ էին Հայոց աշխարհէն: Կը հարցընէր անոնց և կը հասկնար անոնցմէ յաղթութիւնը վաստկելու հնարազիտութեան մասին: Եւ երբոր տեղեկացաւ իւրաքանչիւր մարդու քաջութիւնները, իր տրամադրութեան տակ եղող զօրապետներէն շա-

տերը կը կանչէր, և կը հրամայէր բերել փիղերու երամակներ, և գազանները գունդերու կը բաժնէր և իւրաքանչիւր փիղի աջ ու ձախ կողմերը 3000-ական զինուոր կը զետեղէր, չհաշուելով տակաւին մընացեալ զօրքերը:

Մեծամեծներուն հետ կը խօսէր արքունի հրամանով և կ'ըսէր. — Ա Անձնիւր ոք թող յիշէ մեծ թագաւորին պատուէրը, և թող նախընտրէ մահը քան թէ վատութեամբ շահուած կեանքը: Մի մոռնաք պըսակները և առատաձեռն պարզեները որոնք

պիտի չնորհուին ձեզի արքունիքէն։ Տէր էք գաւառներու և ունիք բազում իշխանութիւն։ Դուք զիտէք Հայոց աշխարհին քաջութիւնը և իւրաքանչիւր Հայու արիւթիւնը դէպի նահատակութիւն։ Թիրեւս ձեր պարտուելովը վրիպիք այն կեանքէն զոր պիտի ունենաք։ Յիշեցէք ձեր որդիներն ու կիները. յիշեցէք ձեր սիրելի բարեկամները. զուցէ ոտնահար ըլլաք արտաքին թշնամիներէ և ողբակից ներքին սիրելիներու։

Եսեւ կը յիշատակէր անոնց շատ մը դասալիք ընկերները, որոնք թէւ պատերազմէն ազատեցան, բայց իրենց սուրբ մահուան վճիռը ընդունեցին։

Այս կ'ըսէր և կը սաստկացնէր արքունի հրամանը. կը կազմակերպէր բոլոր զօրքերը, և կը տարածէր բանակը մեծ դաշտին երկայնութեան վրայ։ Կ'ամրացնէր Մատեան գունդը իրրե հզօր աշտարակ կամ իրրե անմատոյց բերդ մը։ Նշաններ կը բաշխէր, գրօններ կը պարզէր, և մեծ փողի ձայնով պատրաստ ըլլալ կը հրամայէր։ Խոկ Կաշտաց, Հոնաց և Գեղաց գունդերը և ուրիշ ընտիր պատերազմիկներ տեղ մը հաւաքելով կը պատուիրէր իր գունդին աջ կողմէն պատրաստ ըլլալ Հայոց գէմ։

Խոկ Քաջն Վարդան՝ աւագանիին խորհուրդով, և ամենուն միաբան համաձայնութեամբ հրամանատարներ կը կարգէր։ Առաջին գունդը Արծրունեաց իշխանին տրամադրութեան տակ կը դնէր և անոր նիզակակից կը կարգէր Մոկաց մեծ իշխանը։ Երկրորդ գունդը՝ Խորին Խորխոռունիին կը յանձնէր և անոր նիզակակից կը կարգէր Ներսէն Քաջըքերունին։ Երրորդ գունդը կուտար Թաթուլ Վանանդեցիին, և անոր նիզակակից կը կարգէր Տաճատ Դնթունին, և քաջ մարտիկներէն շատեր անոնց աջ ու ձախ կողմէրը կը գետեղէր։ Իրեն համար կ'առնէր չորրորդ գունդը և իրեն նիզակակից քաջ Արշաւիրը և հարազատ եղբայր Համազառպ Մամրիկոնեանը։ Կը կարգաւորէր և կը կազմակերպէր ճակատը ամբողջ գաշտի երկայնքին, գէմ յանդիման Արեաց գունդին, Տղմուտ գետի եղերքը։

Եւ երբոր այսպէս պատրաստուեցան, երկու կողմէրն ալ սրտմտութեամբ և բարկութեամբ լեցուած, գաղանացին զօրու-

թեամբ յարձակեցան իրարու վրայ. և երկու կողմերուն աղաղակներուն ձայները շփոթած ամպերու ճայթումներուն կը նմանէր և զոռում զոչումները լեռներու քարանձաւները կը շարժէր։ Սաղաւարտներու և զէնքերու բազմութենէն արեգակի ճառագայթներն իսկ կը բեկանէին։ Նաև բազմաթիւ սուրերու չողիւնը, և բազմախուռն նիզակներու ճանը կարծես թէ երկինքէն թափող հրածգութիւնները ըլլային։ Քանզի ով կրնայ պատմել ահաւոր ձայներու մեծ տագնապները. ինչպէս վահանաւորներու կոփիւնները և աղեղներու լարերուն ճայթումները, որոնք ամենուն ականջները կը խլացնէին։

Հոն կարելի էր տեսնել մեծ տագնապին յառաջացուցած տարակուսանքն ու շտապը, և երկու կողմերու յանդուզն յարձակումէն յառաջ եկող աղէտը։ Թանձրամիտները կը յիմրանային և վախկոտները կը փախէին, քաջերը կը յարձակէին և նահատակուողները կ'աղաղակէին։ Բազմութիւնը խումբերու բաժնուելով փորձեց գետը իջնել, բայց Պարսից գունդը անծանօթ ըլլալով տեղւոյն դժուարութիւններուն ցեխին մէջ սողալ սկսաւ։ Խոկ Հայոց գունդը անցաւ գետը ձիերու վրայ նստած։ մեծ զօրութեամբ իրար բազխելով երկու կողմէրէն շատ մը վիրաւորներ ինկան դիաթաւալ։

Այդ մեծ տագնապին՝ Քաջն Վարդան շուրջը նայելով տեսաւ Հայոց գունդի ձախ թեկին ընկրկելով տկարանալը պարսիկ զօրքերուն առջև։ Յարձակեցաւ մեծ ոյժով այդ կողմին վրայ և պարսից գունդին աջ թեկանելով քչեց փիղերուն առջև և շըջան ընելով կը կոտորէր մինչև նոյն տեղը։ Եւ այնպէս շտապով տագնապի կը մատնէր գանցնք որ, մինչև խոկ Մատեան գունդի ամուր պատրաստութիւնները խորտակուեցան։

Ապա Մուշկան նիսալաւուրտ տեսաւ թէ ինչպէս Հայոց գունդէն շատերը բաժնուած ետ մեացած էին հովիտներուն մէջ։ Զայնը բարձրացնելով կը քաջալերէր իր չուրջի զինուրըները, որոնք Վարդանի խորմին դիմաց դիրք բռնած էին։ Եւ ինկող դիակներու առատութիւնը գերբուկներու քարակոյտերուն կը նմանէին։

Մուշկան նիսալաւուրտ փիղերու վրայ

նստած կը զիտէք իր չուրջը, և իր մեծ գալարափողերու ձայնով իր գունդը յառաջ կը քչէք, ու յառաջամարտիկ զինուորներով Հայոց գունդը կը պաշարէք: Իսկ Քաջն Վարդան իր կորովի նիզակակիցներուն հետո ոչ նուազ նախճիբներ գործեց, և նոյն տեղւոյն վրայ արժանի եղաւ առնելու նահատակութեան պասկը:

Պատերազմը երկարելով օրը կը տառաժամէք: շատերը մահուան օրհասին մէջ կը տուայտէին, իսկ զիտէները իրարու մօտ ինկած կը նմանէին կտրուած մայրի ծառերու:

Եւ որովհետեւ գարուն էք, ծաղկալից դաշտերը ողողուեցան շատերուն յորդահոս արիւնով: Երբոր մէկը տեսնէք ինկած զիտէներու կոյտերը, սիրաը կը բեկանէք և ազդիքները կը գալարուէին, մանաւանդ երբ լսէք վիրաւորեալիներուն մնչիւնը, կոտորւողներուն մոնչիւնը, վիրաւորներուն սուղալը, վախկոտներուն փախուստը, կիներու ճիչերը, սիրելիներու և բարեկամներու ողբը: Վասնդի կողմերէն ոչ մէկը կարելի էք ըսել թէ յաղթական էք կամ պարապւած: Քաջները քաջներու գէմ ելլելով երկու կողմերն ալ պարտութեան մատնուեցան:

Բայց որովհետեւ ինկած էք Հայոց զօրավարը մեծ պատերազմին մէջ, ոչ ոք կար այնուհետեւ որ անոր փոխարէն զըլիսաւորէք ու իր չուրջ հաւաքէք մնացեալ գունդը: Եւ թէն ապրօնները աւելի շատ էին քան մեսնողները սակայն, ցրուեցան փախչելով Հայոց Աշխարհին ապահով տեղերը: Իսկ պարսիկները կը բռնանային շատ մը գաւառներու և բերդերու վրայ զորս չէին կրնար գրաւել:

Հետևեալները անուններն են քաջ նահատակներուն որոնք նոյն տեղը նահատակուեցան: Մամիկոննեաններու Տունէն Քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք մարդոցմով: Խորխոռուննեաց Տունէն, կոռովին Խորէն տասն և ինն մարդոցմով: Պալուննեաց Տունէն, Քաջն Արտակ, յիսուն և եօթ մարդոցմով: Դիմուննեաց Տունէն, Տաճատ զարմանալին տասն և ինն մարդոցմով: Դիմաքսենից Տունէն, իմաստունն Հմայեակ քսան և երկու մարդոցմով, արդարն Արսէն, և յառաջաղէմն Գարեգին:

Այս երկու հարիւր ութսունը եօթը

նահատակներուն հետ մեծամեծ նախարարներ ալ նոյն տեղը մարտիրոսացան: Ինչպէս հաւեւ Արծրուննեաց արքունի տունէն և նախարարական տուններէ, ընդամէննը հաղար երեսուն և վեց:

Իսկ Պարսից կողմէ այդ օրը ինկան երեք հաղար հինգ հարիւր քառասուն եւ չորս մարդ, ինը անոնցմէ նախարարներ, որոնց համար շատ ցաւեցաւ Մուշկան Նիւսալաւուրտ, մահաւանդ երբ տեսաւ իր գունդին հասած անդարմաննելի վնասը որ եօթը անդամ աւելի էք քան Հայոց գունդին վնասը, չեխն հանդարտեր անոր մըտքին խորհուրդները վասնդի պատերազմին վախճանը իր ենթադրած ելքը չունեցաւ: Անիկա կը վախնար թագաւորին զրել այս բոլոր պատահարները ճշգութեամբ, սակայն չէր ալ կրնար պահել գաղտնի, այսպիսի մեծ կոփւ մը:

Այս խորհուրդներուն մէջ կը տուայտէք, երբ Վասակ ուրացողը որ ինքզինքը փիղերուն մէջ պահելով ողջ մնացած էք ներկայացաւ և միսիթարեց զինք ցոյց տաշով իրեն խարիշական հնարքներ, զրաւելու համար Հայոց մնացեալ ամրոցները: Երդումներ կնքել կուտար արքունի հրամանով, խարերայ երեցներու և իր իսկ անձին վկայութեամբ, զանոնք իրբեւ պատգամաւորներ զրկելով, հաւատացնելով թէ ապստամբութիւնը պիտի ներուի և այլու իսկ պիտի չնորհուի եկեղեցիներու շինութիւնը, և թէ բոլոր նախկին կարգերը պիտի վերահաստատուին: Թէնք հրամանը թագաւորական վաւերացումով էք տրուած վասնդի անոր ոյժը շատ տկարացաւ, որովհետեւ կողմերէն ալ կոտորուեցան: Հայոց զօրքերը շատ անգամ վասակի խարամանին ալ չհաւատացին:

Գ. Ս. Զ.

